THE NEWBORN GATEWAY

Ի՞նչ է Newborn Gateway-ը:

Եթե ընդգրկված եք Medi-Cal-ում կամ Medi-Cal Access Program (MCAP)-ում և ծննդաբերում եք մասնակից առողջապահական վայրերում, ձեր մատակարարը կարող է օգնել ձեր երեխային ստանալ առողջապահական խնամք: Newborn Gateway-ը պահանջում է, որ որոշ առողջապահա կան ծառայություններ մատուցողներ ընդգրկեն ձեր նորածնին ապահովագրական ծածկույթի մեջ ծնվելուց հետո 72 ժամվա ընթացքում:

Ձեր երեխան կարող է իրավասու լինել այդ ծածկույթց օգտվելու Newborn Gateway-ի միջոցով, եթե.

- Դուք ակտիվ եք և ընդգրկված Medi-Cal-ին կամ Medi-Cal Access Program (MCAP)-ին, երբ ծննդաբերել եք և
- առողջապահական ծառայություններ մատուցողը մասնակցում է “Presumptive Eligibility”-ին:

Անպայման տեղեկացրեք ձեր առողջապահական ծառայություններ մատուցողին, որ ունեք Medi-Cal կամ Medi-Cal Access Program ծածկույթ: Տրամադրեք նրանց ձեր State of California Benefits Identification Card (BIC)-ի պատճենը: Եթե չունեք ձեր BIC-ի պատճենը, դուք դեռ պետք է նրանց տեղեկացնեք, որ ծածկույթ ունեք:

Medi-Cal	MCAP
Եթե ձեր մատակարարը չի կարողանում ձեր երեխային ընդգրկել ապահովագրության մեջ, և դուք ապահովագրություն եք ստանում Medi-Cal-ի միջոցով, խնդրում ենք հայտնել ծննդյան տեղեկությունները հետևյալ հասցեով. benefitscal.com	Եթե ձեր մատակարարը չի կարողանում ձեր երեխային ընդգրկել ապահովագրության մեջ, և դուք ապահովագրություն եք ստանում MCAP-ի միջոցով, խնդրում ենք զանգահարել՝ տեղեկացնելու համար ծննդյան մասին հետևյալ հեռախոսահամարով. 1-800-433-2611 կամ ֆաքսով. 1-888-889-9238

Դիմեք կամ թարմացրեք ձեր Covered California-ի դիմումը.

Այցելեք https://www.coveredca.com/, կամ
զանգեք Covered California 1-800-300-1506 (TTY: 1-888-889-4500) համարով